

տախտակներ էին, եւ նա բացաւ էջ մը, ուր ոչինչ չի կար գրուած եւ ներկայեց քրմուհուոյն. «Կարդա՛յ, ներշնչեալդ հաստուածոց», ըսաւ հզօր ձայնով. երաժշտութիւնն դադրեց, եւ այնպիսի լռութիւն մը տիրեց եւ ամէն շունչ այնպէս կեցաւ, որ մէկ բան մը միայն կը լսուէր՝ քրմուհուոյն շնչառութիւնը. եւ ամէն աչք իրեն կը նայէր: Իսկ նա քանի նայէր այդ էջին վրայ, իւր երեսին գոյնը, իւր ականարկը, իւր շարժմունքը շարունակ կը փոփոխուէին, եւ ի վերջոյ մեռած աչքերը կենդանութիւն եւ հետաքրքրական փայլ մը առին. իբրեւ թէ անյագ կը կարդային՝ եւ վերջը-վերջը այդ աչքերի լիճ մը դարձած արտասուաց հեղեղներ կ'իջեցնէին, կղպուած ծնօտները կը բացուէին եւ հառաչանաց ձայներ, եղուկներ, աւաղներ իրարու կը յաջորդէին: Այն ժամ քրմապետը «Կարդա՛յ, ո՛ր ներշնչեալդ հաստուածոց», կրկնեց, «Բարձր ձայնիւ կարդայ՛»:

Եւ քրմուհուոյն հեկեկանաց ձայնը այսպէս խօսեցաւ. «Քի՛չ են, Դայաստան, քու չարչարանքդ, քի՛չ են քու տանջանքներդ, դեռ կանգուն են քու քաղաքներդ, դեռ կանգուն են քու տաճարներդ, դեռ հարսի եւ փեսայի ձայներ կը լսուի ի քեզ, դեռ տղայն օրրանին մէջ կը ճուայ, դեռ հուրը վառարանին մէջ կը ճարճատէ, դեռ մուխը երդեաց վրայէն կը բարձրանայ: Դեռ քու որդիքդ բարձրավիզ կը քայլեն, դեռ երկաթը իրենց ձեռքին եւ իրենց մէջքին վրայ կը փայլի, դեռ սաղաւարտը իրենց գլխին վրայ կը ճաճանչի, դեռ քու աղջիկներդ ծիրանիներով կը զարդարուին, դեռ նոցայ վզին վրայ ոսկի մանեակ եւ թելերնին ապարանջաններ կը նշուլեն. բայց այդ ամէնուն վերջն է՝ քու քաղաքներդ պիտի անմարդանան, քու շէներդ անշեն պիտի մնան, քու տաճարներդ կիսակործան, քու տուներդ անկենդան, ուրախութեան եւ հարսանեաց ձայներուդ ողբերու եւ լալերու ձայներ պիտի յաջորդեն, քու գէւքերուդ շկահմանց, շղթայներու ձայներ, քու մանեակներուդ եւ ապարանջաններ ու հնչմանց՝ գերութեան խարազաններու ճարճատմունք. այո՛, քու կտորիճներդ գերի իրենց երկրի մէջ, գերի օտարութեան մէջ, քու աղջիկներդ աղախին իրենց հայրենի տան եւ դառն պանդխտութեան մէջ: Երբ արեւելք երեսդ դարձնես՝ թշնամի պիտի գտնես, երբ արեւմուտք դառնաս՝ թշնամի պիտի տեսնես. օգնութիւն պիտի խնդրես նախատինք,